Չարենցավան համայնքի ղեկավար
պրն. Հ.Շահգալդյանին

ՁԵԿՈՒՅՑԱԳԻՐ

Հայտնում եմ Ձեզ, որ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությունը (ՏՀԶՆ) պատվիրակել է Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերությանը (ԳՄՀԸ)՝ ֆինանսավորել «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է իրականացնել Չարենցավանի համայնքապետարանի Քաղաքացիների սպասարկման գրասենյակի կառուցվածքի և դիզայնի արդիականացման ենթածրագիրը:

Ենթածրագրի ամբողջական ֆինանսավորումը կազմում է 15,187,390.00 (տասնհինգ միլիոն հարյուրութսունյոթ հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ, որը ԳՄՀԸ-ն Չարենցավանի համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի համաձայն տրամադրում է ամբողջությամբ, բացառապես ՏՀԶՆ-ի անունից և միջոցներով:

Ենթածրագրի նպատակն է՝ նորոգել և արդիականացնել Չարենցավանի համայնքապետարանի Քաղաքացիների սպասարկման գրասենյակը՝ արդյունավետորեն լուծելու բնակիչների աճող կարիքները, ապահովելով ավելի արդյունավետ և օգտագործողի համար հարմար միջավայր՝ թարմացնելով գրասենյակի դասավորությունը, կահավորումը և դիզայնը:

Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտություն կա ստանալ համայնքի ավագանու համաձայնությունը:

Համայնքապետարանի աշխատակազմի
զարգացման ծրագրերի և SS բաժնի պետ՝ Ա. Ծերունյան

05 մարտի 2024թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է՝ 06.03.24թ.
Մտից N 1067 Գործ N 04